

ԱՋԴԵՑԻԿ ԵՒ ՆԵՐԳՈՐԾՈՆ ԱՂՕԹՔԸ

Աստուած կը պատասխանէ՞ աղօթքներու այսօր: Աստուած պատասխանած է Բու աղօթքներուդ: Աստուած թէ՛ պատրաստ է և կը սիրէ՛ պատասխանել մեր աղօթքները: Թէ այլակրօն և թէ Զրիստոսահաւատներ կ'աղօթեն, սակայն Բանի՞ Հայ Զրիստոնեայ մկրտուած անձեր, ամէն օր կ'աղօթեն: Ամէն օր աղօթելը, ո՛չ թէ պարտաւորիչ է, այլ ամէն օր սիրած մէկ անձիդ հետ խօսիլը և խորհրդածելը անոր հետ, թէ՛ հաճելի է, թէ՛ Բաջալերական և թէ՛ օգտակար:

Աղօթել Աստուծոյ, մի միայն խնդրուածք և աղերսանք հայցել չէ, այլ ամենակենսականը խորհրդածել է Բու երկնաւոր Հօրդ հետ, յայտնել Բու շնորհակալութիւնդ Իր ըրած բարիքներուն համար և խնդրել իմաստութիւն թէ ինչպէ՞ս կրնաս ճշմարտապէս ապրիլ Բու կեանքդ որ դառնաս օգտակար, ոչ միայն ինքզինքիդ, այլ նաեւ շուրջիններուդ: Աստուած ամենաբարի և սիրելի խրատատու Փաստաբանն է իւրաքանչիւր մարդ էակին: Ով որ փորձած է, ա՛ն գիտէ:

Աստուած, մեր ծրագիրներուն և գործերուն միջամուխ կ'ըլլա՞յ դրականօրէն ուղղելու մեր Բայլերը դէպի օգտակար ծառայութիւն: Ես իմ անձնական կեանքիս ընթացքին յաճախ նշմարած եմ Աստուծոյ միջամտութիւնը թէ ինչպէ՞ս հասած և օգնած է ինձի նման հողաշէն արարածի մը: Եթէ տիեզերքի հզօր Արարիչ Աստուած կը հետաքրքրուի և կը լսէ հողածինի մը խնդրանքը ու սիրով կ'օգնէ անոր, ինչպէ՞ս չսիրել Ձինք և ինչպէ՞ս չհաղորդուիլ և չյարաբերիլ Անոր հետ: Ոչ թէ օրը անգամը մը, այլ մեր գոյութեան բոլոր ընթացքին:

Սրինակ, ինչո՞ւ նոր գործի մը ձեռնարկելէ առաջ հարցնել մեր երկնաւոր Հօրը, թէ կ'արժէ՞ սկսիլ այսինչ գործը, թէ սպասել աւելի յարմար առիթի մը: Ինչո՞ւ չխորհրդակցիլ և Իր կամքը չճանչնալ: Որքա՞ն հաճելի է Աստուծոյ, որ հողաշէն արարած մը իր Արարչին խորհուրդը կը հայցէ և Անոր կամքը գիտնալ կ'ուզէ, ո՛չ թէ միայն եկեղեցական գործի մը համար, այլ առեւտրական, գրական կամ մշակութային խնդրի մը նկատմամբ ալ:

Ինչո՞ւ Աստուծոյ հետ խորհրդակցիլը հաճելի է Իրեն, և օգտակար է մեզի համար: Երբ զաւակ մը իր մտադրութիւնը կամ առեւտրական ձեռնարկը խորհրդածէ զինք սիրող հօր մը հետ, անպայման օգտուողը կ'ըլլայ զաւակը: Ինչո՞ւ: Որովհետեւ սիրող հա՛յր մը համայնապատկեր հորիզոնով կը Բննէ սոյն հարցը և եթէ հաւնի, կրնայ նիւթական օգնութեամբ եւս Բաջալերել իր աշխատասէր զաւակը: Նոյնպէս ալ մենք, երբ աղօթքով դիմենք Աստուծոյ և յայտնենք մեր ծրագիրները Անոր, և ուզենք գիտնալ Իր բարի կամքը, Ինք շատ սիրով պիտի ուղղէ մեր ծրագիրները, և շատ հաւանական է, որ օգնէ

մեզի իր ճոզեկան Զօրութեամբ կատարելու ա՛յն ինչ որ է Ի՛ր սուրբ կամֆը:

Աջակերտները, Յիսուսի չամբառնալէն յետոյ գործեցին այնպիսի մեծ հրաշքներ, որոնք ո՛չ թէ իրե՛նց իմաստութեամբ տեղի ունեցան, այլ Սուրբ ճոզուոյն զօրութեամբ: Ինչո՞ւ, որովհետեւ անոնք փափաքեցան կատարել ոչ թէ իրե՛նց կամֆը, այլ Անոր, որ զիրենք դրկած էր դառնալու մարդու որսորդ: Աջակերտները գործեցին բազմազան հրաշքներ և աննախընթաց բժշկութիւններ, նոյն իսկ յարութիւն տուին մեռելներու: Ինչպէ՞ս ընդարձակուեցաւ աջակերտներուն ձեռնարկը: Իրե՞նց ճարպիկութեամբ, ոչ, այլ Աստուծոյ շնորհաբաշխ զօրութեամբ: Ուրեմն աղօթել և ջարունակ խորհրդակցիլ Աստուծոյ հետ, թէ օգտակար է և թէ երկինքի հրեշտակները կ'ուրախացնէ:

Մարդ ինքզինքի՛ն համար ապացուցանելու է, թէ Արարիչ Աստուած գոյ է: Ճատ է թիւը այն քարոզիչներուն, որոնք կը քարոզեն Աստուծոյ Խօսքը, սակայն իրենք չունին այդ գերբնական փորձառութիւնը թէ Արարիչ Աստուած գոյ է և կը պատասխանէ մեր աղօթքներուն: Այսպիսի քարոզիչները միայն դերակատարներն են եկեղեցական ծէսերու: Իսկ կան նաեւ աշխարհականներ, որոնք չեն կրնար ուրանալ ոչ միայն Աստուծոյ գոյութիւնը, այլ նաեւ Անոր խորհրդակցից ըլլալը մարդ արարածին հետ: Այսպիսի աշխարհականներն ու հոգեւորականներն են, որ կը պահեն Յիսուսի եկեղեցին կանգուն, գործօն և յարթական:

Պօղոս առաքեալ շատ իմաստալից գաղտնիք մը կամ բանալի մը կու տայ հաւատացեալներու, որոնք կը փափաքին աշխատիլ և գործել Յիսուս Բրիստոսի համար, Ան կ'ըսէ.

Որպէսզի «կարենա՞ք ճանչնալ Բրիստոսի սիրոյն

գիտութեան

գերազանցութիւնը, և լեցուի՞ք Աստուծոյ լրիւ ամբողջութեամբ:

*Ուրեմն, Անոր՝ որ կարող է, համաձայն այն զօրութեան որ կը գործէ մեր մէջ, աւելին ընել և աւելի՛ առատութեամբ բան այն անէնք՝ զոր մենք կը խնդրենք և կը մտածենք, Անոր փա՛ռք եկեղեցիին մէջ և ի Բրիստոս Յիսուս, բոլոր ժամանակներու և մէջ յախտեալս յախտե-
նից: Անէնա-Եփես. 4.19-21:*

Ինչպէ՞ս կարելի է ճանչնալ Բրիստոսի սիրոյն գիտութեան գերազանցութիւնը: Յիսուս Բրիստոսի Աւետարանը կարդալ անհրաժեշտութիւն մըն է: Սակայն պարտ է գիտնալ, ինչպէ՞ս կարդալը: Եթէ օրական գլուխ մը կարդանք, լաւ բան մը ըրած կ'ըլլանք, որպէս բարի սովորութիւն մը: Իսկ եթէ կ'ուզէք սերտե՛լ և ճանչնալ Մարդեղացեալ Յիսուս Բրիստոսը, պարտաւոր ենք կարդալ նոյն դրուագը իր ամբողջութեամբ, նաեւ միւս Աւետարաններուն մէջ ալ: Այս բոլոր ընթերցումը տեղի ունենալու է նոյն պահուն: Ձեք կրնար նոյն դրուագը կարդալ զանազան օրերու ընթացքին:

Օրական միայն գլուխ մը Աւետարան կարդալը, կը նմանի թաղին մէջ

դրացիի մը հանդիպիլ և բարեւել: Իսկ եթէ կ'ուզենք սոյն դրացին ճանչնալ, պարտաւոր ենք զինք մեր տունը հրաւիրել ճաշի կամ տեսակցութեան, ժամանակ գոհել և անոր կեանքի մասին տեղեկանալ, անունը և կրօնքը հարցնել, և ուրկէ՞ Գանատա եկած ըլլալը գիտնալ: Կարճ խօսքով, զոհողութիւն կը պահանջէ: Նոյնպէս ալ Մարդեղացեալ Յիսուսը ճանչնալ, անձնաւորութիւն, զոհողութիւն և ծառայութիւն կը պահանջէ: Ձեք կրնար Աւետարանին մէջի դէպքերը առանց Աստուծոյ աղօթելու կարդալ: Ինչո՞ւ, որովհետեւ առանց Աստուծոյ օժանդակութեան մեր կարդացած հատուածին մէջի ջատ մը մեծարժէք խորհուրդները, կրնան վրիպիլ մեր տեսողութենէն:

«Քրիստոսի *սիրոյն գիտութեան գերազանցութիւնը*, նիւթական և շօշափելի գիտելիքներ չեն, այլ բարոյական և հոգեկան ներգործական զօրութիւններ: Որոնց դերը և ազդեցութիւնը կ'իւրացուին մի միայն Յիսուս Քրիստոսի յայտնութեամբ իր սիրելի աշակերտողներուն: Աւետարանը սերտել կամ ուսումնասիրել կը նշանակէ փորձառաքար տեղեկանալ, այսինքն Բննարկութեամբ ճանչնալ ու ոչ պարզ մակերեսային գաղափար մը ունենալ:

Պօղոս առաքեալ երկար տարիներու յոգնեցուցիչ քարոզչական ծառայութեան մէջ իսկ կը Բաջալերէ իր Տիմոթէոս աշակերտը ըսելով.

*«Անա թէ ինչու ես կը կրեմ այս չարչարանները, բայց ամօթ չեմ համարեր, որովհետեւ **գիտե՛մ թէ որո՛ւ եմ հաւատացեր. և վստահ եմ թէ ան կարո՛ղ է իմ աւանդս պահել մինչեւ այն օրը**»--Բ Տիմոթ. Ա.12:*

Երբ Պօղոս առաքեալ "գիտեմ" բառը կը գործածէ, իր ամբողջ կեանքը և անձնաւորութիւնը դրած է այդ **գիտեմ** բառին մէջ: Պօղոս առաքեալ այնպիսի տեսիլներու և երկնային յայտնութիւններու հաղորդ եղած էր, որ ան իր հոգեկան ամբողջ զօրութեամբ կը ջանայ արտայայտել նաեւ ուրիշները, թէ իր ճանչցած աստուածառաք Յիսուս Փրկիչը երազ մը չէ՛, մտապատկեր մը չէ՛, այլ ճշմարտապէս ու շօշափելի իրականութիւն: Ան կ'ուզէ բաժնել իր հաւատքը և յոյսը Աստուած սիրողներու և իր հաւատակիցներու հետ:

Այսպիսի հոգեկան հմտութիւն և փորձարկութիւն մըն էր որ Յիսուսի աշակերտները ջանացին փոխանցել նորադարձ հաւատացեալներուն որպէսզի անո՛նք եւս ճանչնան չա՛յր երկնաւորը և աղօթքով հաղորդուին երկնաւորին հետ: Նորադարձ հաւատացեալները ո՛չ թէ ճգնաւոր դարձան, այլ աւետարանիչները եղան այն Աւետարանին, որ հաղորդ ըրաւ զիրենք Աստուծոյ և Անոր Որդւոյն Յիսուս Քրիստոսի:

Ինչո՞ւ կարգ մը հաւատացեալներու աղօթքը չի պատասխանուիր: Ոչ թէ Աստուած չի պատասխաներ, այլ հաւատքի եկող մեղաւորներ, հաւատալո՛ւմ

հանդերձ Աստուծոյ չեն ուզեր զղջալ և փոխել իրենց նախկին մեղսալից ընթացքը: Անոնք կ'ուզեն ծառայել երկու Տէրերու: Ինչո՞ւ կը կարծե՞ք թէ Յիսուս ուզեց Չակֆէոսի տունը գիշերել այդ օրը: Որովհետեւ Չակֆէոս մաքսաւորը զղջաց իր անցեալի ըրած մեղքերը, ան եղած էր յափշտակիչ, անողորմ, դրամասէր և անգութ: Երբ հաւատաց Յիսուսի, ապաշխարեց, զղջաց և ցաւեցաւ իր նախորդ գործած աւարառութիւններուն և հանրութեան ներկայութեան խոստովանեցաւ ու ըսաւ.

**«Ահա իմ ինչֆերուս կէսը աղֆածներու ն կու տամ,
և եթէ ոեւէ մէկը զրկած եմ՝ քառապատիկ կը հատուցանեմ.»**

--Ղուկ. ԺԹ. 8:

Ահաւասիկ ճշմարիտ ապաշխարութիւն, ուր զղջում և հատուցում կայ, Յիսուսի ճշմարտապէս հաւատացողի մը, և առ երես հաւատացողի մը միջեւ: Չղջալ և ցաւիլ անցեալի մեր գործած սխալներուն և անձնասիրութիւններուն համար, ենթական կը կարօտի քաջութեան և խոնարհութեան: Մոյն քաջութիւնն ու խոնարհութիւնը Աստուած կու տայ ա՛յն ապաշխարողներուն, որոնք անկեղծօրէն կը զղջան ու կը ցաւին իրենց գործած "ես"ի մեղքերուն համար: Հաւատացեալ մը չի կրնար իր անցեալի մեղաւոր կեանքով քալել դէպի Սրբութիւն: Մեր անձնասէ՛ր կեանքով, չենք կրնար հաղորդուիլ և յարաբերիլ Սրբութեան հետ: Այո, Աստուած կը սիրէ համա՛յն մարդկութիւնը, բայց Իր սրբութեան պատճառաւ, սուրբ ըլլալ կը պահանջէ Իրեն դիմողներէն: Պարտէզի աղտոտ ձեռքերով չես ուզեր հիւրասիրել քեզի այցելողները: Նախ կ'երթաս կը մաքրե՛ս ձեռքերդ, անկէ յետոյ կը տեսնուիս ու կ'ողջագուրուիս:

Պօղոս առաքեալ Կորնթոս քաղաքի հաւատացեալներուն կ'ըսէ. *«Զրիստոս Յիսուսին նուիրուածներուդ, սուրբ ըլլալու կոչուածներուդ.»* --Ա Կոր.Ա. 2:

Պետրոս առաքեալ եւս կը գրէ ըսելով. *«Սուրբ եղէք դուք ալ ձեր բովանդակ կեանքի ընթացքին. քանի որ գրուած է. "Սուրբ եղէք, որովհետեւ սուրբ եմ էս.»* --Ա Պետ. Ա. 16-17:

Ուր մարդկային հնարքը և ճարտարութիւնը կը լուեն, աղօթքը կը սկսի: Աղօթքը՝ աստուածային սուրբ գերիշխանութիւնը հաստատել է մեր հոգիին մէջ: Սրբազան վայրկեան մըն է մարդկային կեանքին մէջ երբ ան իր սիրտը կը բերէ, որպէս անձնուրաց զոհ մը Աստուծոյ, և անձնատուր կ'ընէ զայն Անոր կամքին:

Իսկական աղօթքը, հաղորդութիւն, յարաբերութիւն և տեսակցութիւն է Աստուծոյ հետ: Զրիստոնէութեան մէջ, անոր նշանակութիւնը հոգիի ամենէն նուիրական և սրբազան պահն է:

Օգոստոս 7, 2003

Թորոնթօ

“ԻՐԱՐՈՒ ՅԱՆԴԵՊ ԳԹԱՍԻՐՏ Ե Ղ Է Ք”

Հոռմ. ԺԲ. 9:

Աստուծոյ վերագրուած են երկու առանձնաշատկութիւններ՝
Արդարադատութիւն և Գթասրտութիւն

Գութ ու ողորմութիւն առ թշնամիս, որ գերմարդկային է և աստուածանրմանութեան կը տանի: Մարդը իրապէս մարդ է, երբ իր մէջ կը ծնի գութը: Եթէ սիրենք մեր թշնամին՝ իր հոգին մեզի աւելի յստակ պիտի ըլլայ և որքան աւելի թափանցենք անոր մէջ, այնքան աւելի պիտի տեսնենք թէ իրաւունք ունի մեր գութին և մեր սիրոյն: Առանց արդարութեան, ոչ մարդկային սէրը կատարեալ է, ոչ հաւատքը անեղծ, ոչ գութը անկեղծ, ոչ բարեկամութիւնը վստահելի, ու ոչ խօսքն ու խոստումը հաւատալի: Ողորմութեան վերջնական ձեւը և կիրարկումը, Աետարանին մէջ, կը գտնուին գթութեան մէջ:

Նիցչէ (1844-1900) կոտորակեց ու փշրեց բազմաթիւ մշակութային ու կրօնական կարծիքներ 19-րդ դարուն:

1. Ան կը հաւատար թէ կեանքը ունի ա՛յն իմաստը, ինչ որ ենթական կու տայ:
2. Ան ծանուց թէ Աստուած մեռած է:
3. Ան ներկայացուց քրիստոնէական առաքինութիւնները՝ գթութիւն, խնայր-հութիւն, ազնուութիւն և անձնագոհութիւն որպէս ոչխարամիտ բարոյականութիւն, որոնք պէտք են ջնջուիլ:

Յիսուսի Բարոգութեան առաջնահերթ պատուիրանը ողորմութիւն և գթութեան գործադրումներն են--Ղուկ. ԺԱ. 41:

*«Ողորմութի՛ւն տուէ՛ք և ահա
ձեր ամէն ինչը մաքուր պիտի ըլլայ»:*

«Յիսուս գթաց անոնց վրայ, որովհետեւ յոգնած էին ու ցրուած: Այն ատեն ըսաւ Իր աջակերտներուն «Հունձքը առատ է, բայց մշակները՝ սակաւ» --Մատթ. Թ. 37: Բարի Մամարացիի առակին մէջ, Յիսուս հարցում մը ուղղեց Փարիսեցիին և ըսաւ. «Ըստ Բեզի, այդ երեքէն ո՞րն է աւագակներու ձեռքը ինկածին ընկերը»: Եւ ան ըսաւ. *«Ան՝ որ գթաց անոր վրայ»:* Յիսուս ըսաւ անոր. «Գնա՛ դո՛ւն ալ նոյնը ըրէ՛ »: Ո՛չ թէ անոր գթութեան **հաւատա՛**, այլ **եղի՛ր գթասիրտ նաեւ դուն:**

«Աննուաճելի մեծութիւնը, ո՛չ հանճարեղ գիտունն է, ո՛չ ներհուն մտաւորականը, ո՛չ շնորհագարդ արուեստագէտը, ո՛չ դափնեկիր ֆերթողը, ո՛չ վերասլաց աղօթողը, ո՛չ ամենագոր աշխարհակալը և ո՛չ ալ ոսկեկշիռ միլիոնատերը:

***Կեանքի մէջ իսկական մեծութիւնը՝ այն
մահկանցու մարդն է, որուն սիրտը կը գործէ
գթութեան և զոհողութեան բարախումներով:»***

Գթութեան և սիրոյ գաղափարով է, որ եկեղեցին կապուեցաւ իր շրջապատին և աշխարհի: Աստուածային սիրոյ գերագոյն արտայայտութիւնը ուղղել է մարդը մարդասիրութեան և գթութեան: Մարդ արարած որքան մօտենայ Աստուծոյ, այնքան աւելի մօտեցած կ'ըլլայ իր մարդ ընկերոջ: Բարի Հովիւ Յիսուս ճանչցուած էր իբր բարեսիրտ և կարեկցող փոքրին, խոնարհին և աղքատին: Ան մարդոց կը մօտենար կարեկցութեամբ և բարութեամբ: Զրիստոնէութեան մէջ կարեկցութեան և գթութեան գործը դարձաւ համայնական կեանքի մասը: «Յիսուսի կարեկցութեան խօսքերը, Իր Աջին հպումը, Իր նայուածքի սեւեռումին ազդեցութիւնը և մանաւանդ արդարութիւն և իրաւունք պահանջող Իր Խօսքերը դարձան հաւատացեալներու իրագործութիւնները»:

Զաղափակիր թ աչքերու անբարեխիղճ ու անկարեկիր նայուածքին դիմաց, Յիսուս պատկերեց "Բարի Սամարացիին" առակը: Ան ջանաց մարդկութեան հոգւոյն մէջ արթնցնել գութը և կարեկցութիւնը, փոխանակ ասելութեան և վրէժխնդրութեան: Անձնանուէր Յիսուսի աշակերտ Պետրոս առաքեալ կը կրկնէ իր Վարդապետին խօսքերը, նաեւ Բասնէրոյ դարու հաւատացեալներուն, ըսելով. «*Եղէ՛ք համախորհուրդ, կարեկցից, եղբայրասէր, ազնու ազնւթ, խոնարհ:--*Ա. Պետ. Գ. 8: Որովհետեւ առաքեալին Վարդապետը՝ Յիսուս ճանչցուած էր իբր բարեսիրտ և կարեկցող փոքրին, խոնարհին և աղքատին:

***Վիշաք կը բանայ մեր աչքերը
տեսնելու և համակուելու ուրիշին ցաւով:***

Յիսուս Զրիստոս հրաշալի գունազարդարումներով դրսեւորեց ժողովրդական վշտի և ցաւի հոգեվիճակը: «Հաշտուելու համար նեղութեան ու վշտի գաղափարին հետ, սորվելու համար ցաւին խորունկ փիլիսոփայութիւնը, փուշերուն մէջ տեսնելու համար խոցոտուած երջանկութիւնը, ամօթահար փառքը, գամուած սէրը և մահուան ստուերին ներքեւ կեանքին փթթումը, նայեցէ՛ք Խաչեցեալին»-- **Առաքել Կ. Պետիկեան** (Գիսակ) 1860-1902: Գթասիրտ ըլլալ նաեւ գտնել է Աստուած, խօսելու Անոր հետ և ապրելու և ցոլացնելու Զրիստոսի սէրը, ծառայութիւնը և նուիրումը:

Եկեղեցիին առաջնակարգ պարտականութիւնն է չափահասութեան առաջնորդել հաւատացեալը: Աշխարհի եկեղեցիները կը թերանան իրենց պարտականութեան մէջ: Կը թերանան, որովհետեւ եկեղեցականները հեռացած են իրենց կոչումէն ու չեն կատարեր իրենց դերը: Եկեղեցիներուն

առաջին Բայը *սիրե՛լ* է զիրար, ոչ որպէս հանրութեան ցուցադրութիւն մը, այլ իրարո՛ւ օգնելով և ծառայելով: Յիսուս ըսաւ Եկեղեցիներուն, նոր պատուիրան կու տամ ձեզի. «Եթէ դուք զիրար սիրե՛ք՝ ատով ամենքը պիտի գիտնան թէ դուք Իմ աշակերտներս էք»--Յով. ԺԳ. 35: Բաւական չէ Բրիստոնեային միայն զՔրիստոս դաւանիլը, այլ Քրիստոսի աշակերտը պարտաւոր է իր եղբայրներն ալ դաւանիլ:

Հաւատացեալներու պարտաւորութիւնը՝
միացում, միաւորում և միասնականութիւն է:

Մատնան միահեծան կ'իջիւէ այս աշխարհին վրայ, գոռոզ ու անպարտելի արքայի մը պէս: Եկեղեցին ո՛չ թէ իր Բարեղէն և ճարտարապետական կարոյցով անպարտելի ու անյաղթահարելի է, այլ իր անձնագործութեամբ, սպասաւորութեամբ և գթասիրտ կարեկցութեամբ: Այն սիրտը, որ կը հաւատայ, կը յուսայ, կը սիրէ, կը պայքարի և իր կեանքի ուղղութիւնը կը վստահի Աւետաբեր Միածին Յիսուս Քրիստոսի, կը մնայ անպարտելի ամէն արհաւիրքի դիմաց: Աղօթքի Տո՛ւն Եկեղեցին է, որ Հայ ժողովուրդը կը պարտի իր ազգային զգացումի յարատեւումը՝ ստրկութեան դարերու ընդմէջէն:

Ուստի դիմե՛նք գթութեան Կատարելութեան,
որ ըսաւ. *«գթած եղէք ինչ պէս ձեր երկնաւոր Հայրը»:*

Յունիս 6, 2003
Քորոնթօ

“ՕՐՀՆԵՑԷՔ ԶԵՋ ՀԱԼԱԾՈՂՆԵՐԸ . “ՕՐՀՆԵՑԷՔ ԵՒ ՄԻ՝ ԱՆԻԾԷՔ”

Արդեօք կա՞յ կրօնք մը, հաւատալիք մը կամ ողջամիտ հասկնալու կարողութիւն մը, որ ընդունի վերոյիշեալ պատուերը և հաւատարմաբար կատարէ զայն ի սէր իր Տիրոջ: Անձնակեդրոնութեան, ընչաճաղցութեան և փառասիրութեան կործանարար բնագոյները հակակշռող ամենաճշգրտ ազդակներն են սէրը, ծառայասիրութիւնը և հանդուրժողութիւնը, որոնք հիմնական տարրերը կը կազմեն Զրիստոնէական հաւատքին: Նախանձը կը ծնի ու հասակ կ'առնէ մարդուն հետ: Ան բնագոյ մըն է, արմատացած է մարդուն մէջ և կարելի չէ արմատախիլ ընել. բայց հնարաւոր է զայն փոխակերպել և վերածել բարեաց աղբիւրի՝

«դարձնելով բարի նախանձ և ազնիւ մրցակցութիւն»:

Յուդա առաքեալ, ոչ Իսկարիովտացին, կը գրէ ու կը շատագովէ իր Տիրոջ Տիտուսի գերբնական յայտնատեսութիւնը ըսելով. «Իրենց ամբողջ գիտցածը՝ իրենց **բնագոյազանցութիւններն** են, որոնց կը հետեւին անբան անասուններու պէս, և որոնք իրենց կործանումին պատճառ պիտի ըլլան»--Յուդա 10: Նոյնիսկ ամենէն ազնիւը, մեր սրտերուն մէջ խաւարած է վատ բնագոյներուն ազդեցութեան ներքեւ: Բարոյական կոչուած օրէնք մը ինքնին գոյութիւն չունի՝ *ատուածային հիմէ և յայտնութենէ դուրս*.

Մայրական սէրը, այսօր, տեղի տուած է սեռային բնագոյին առջեւ, գերագոյն զգացումը պարտուած է գերագոյն կիրքին կողմէ: Հաճոյքը առանց հոգիի ու խղճի ներկայութեան, վայրենի բնագոյներու դրսեւորումն է:

18-րդ դարու վերջին տասնամեակներուն, ֆրանսական Մեծ Յեղափոխութեան այս երկու տիտաններուն (Ռոպէսփիէր և Տանթոն) սկզբնական սերտ ու ընկերական գործակցութիւնն ու յետագայ մահացու ատելութիւնը անջնջելիօրէն արձանագրուած պիտի մնան իբրեւ ընկերական ոգիի խաթարման ցաւագին օրինակներ և ամէն գնով իշխանութեան տիրանալու մարդկային ամենավատ բնագոյներու դրսեւորումները:

Ինչպէս մարդ բնախօսականօրէն կը հասնի մեծութեան՝ կատարելութեան, այդպէս ալ բարոյապէս կատարելութեան մը կարիքը ունի: Բարոյական մեծութիւնը ձեռք կը բերուի հեզութեամբ ու խոնարհութեամբ: Զրիստոս Իր կենդանի օրինակով **մարմնացուց** հեզութիւնը, խոնարհութիւնը և ծառայութիւնը: Մարդ իր բնածին ընդունակութիւնները կը ճոխացնէ ընդունելով երկնայայտ ազդեցութեանց բարիքները:

Մարդկային խորհուրդը (խորհրդածութիւնը) գերբնական ուժերու հետ հաղորդուելու միջոցն է այն «միաստիք» և Գերբնական ուժին, որով մարդ կը

հաղորդուի անջրպետի հետ և ուսկից կը ստանայ թելադրութիւններ և ներշնչում: Գերբնական ձայնը որ խորխափումի և խաւարի մէջ մարդկային կեանքին ուղղութիւն կու տայ: Մղում սուր ինֆզինֆիդ յարաբերելու այն Գերբնական ուժին հետ՝ որ է Աստուած: Յիսուս Քրիստոս և Սուկրատէս մեռան ճշմարտութեան համար: Սուկրատէսի համար ո՛չ մէկ տաճար կանգնուած է: Սուկրատէս յորդորեց ժողովուրդը, որ ուղղութեամբ խորհին: Քրիստոսի դաստիարակութեան մէջ կայ գերբնական հորիզոն և տարածք ներկայէն դէպի ապագան, իմաստ և յոյս՝ որ է *Անտուժոյ թագաւորութիւնը*:

Աստուած ամէն ինչի նախասկիզբն է և աշխարհի գոյութեան պատճառ, գերբնական և գերզգայնական էակ, իմանալի և հասկնալի է միայն *մաքուր սրտով*, անիմանալի մարդկային բանականութեամբ: Առանց գերբնական ներշնչման, մարդ հասարակ էակ մըն է, գրեթէ հաւասար՝ անբան կենդանիին: Այս իրողութիւնը լաւ իմացած էին հեթանոսները, աւելի լաւ՝ քան աշտօր-ւան թեթեւամիտ քրիստոնեաները. անունով միայն կամ շարժուձեւերով քրիստոնեաները: Կարգ մը "հեթանոս"-ներ աւելի քրիստոնեայ էին, քան աշտօրուան "քրիստոնեա"-ները: Կարգ մը "քրիստոնեաներ", աշտօր, աւելի հեթանոս են, քան երբեմնի հեթանոսները: Մարդ առանց Գերբնականին կը պարպուի, կ'անջֆանայ և կ'իմաստագրուի: Աղօթքը՝ աստուածային սուրբ գերիշխանութիւնը հաստատել է մեր հոգիին մէջ: Որմէ յետոյ միայն պիտի հասկնանք, թէ

***Ինչու օրհնելու ենք մեզ հալածողները
և աղօթելու անոնց համար:***

Մարդեղացեալ Յիսուս դրկուեցաւ աշխարհ յայտնելու մարդկութեան, թէ եկած է ժամանակը, որ մարդկութիւնը ճանչնայ իր պարտաւորութիւնները: Ան ոչ միայն տուաւ պատուերներ և հրահանգներ, որպէսզի մարդիկ ապրին ըստ Իր յորդորներուն, այլ նախ Ի՛նք անձնապէս փորձեց սոյն յորդորները ու յետոյ տուաւ զանոնք մարդկութեան: Ան ոչ միայն *խորհեցաւ* սոյն հրահանգները, այլ փորձառաքար ապրեցա՛ւ զանոնք:

1. Երբ Յիսուս հալածուեցաւ ժողովարանին մէջ, և իր հակառակորդները ուզեցին Ձիւն ողջ ողջ գահավէժ ընել, Ինֆզինֆ չ'արդարացուց այլ անոնց մէջէն անցնելով դուրս ելաւ:
2. Մանհետրինի դատավարութեան ընթացքին, երբ քանի մը սպասաւորներ Ձիւն ապտակեցին, սպարնալիք չըրաւ անոնց:
3. Պիղատոսին առջեւ երբ կը հարցաֆննուէր, լուռ կեցաւ, ինֆզինֆ չ'արդարացուց:
4. Իր առաքելութեան և հաւատարմութեան որպէս ապացոյց, աղօթեց Իր Հօր ըսելով.

**«Հա՛յր, ներէ՛ առնց, որովհետեւ
չեն գիտեր թէ ինչ կ'ընեն»:**

Ահա այսպիսի Առաջնորդող և մեզ սիրող Փրկիչ մը ունեցած ենք երկրի վրայ: Յիսուս Փրկիչ ճաշակեց մարդկային բոլոր անիրաւութիւնները և թշուարութիւնները ու ջանաց օգնել մեզի որ կրենք մեր դժուարութիւնները: Սոյն պատճառաւ Ան կ'ըսէ մեզմէ իւրաքանչիւրին. *«Իմ լուծս ձեր վրայ առնէ՛ք... և ձեր անձերու ն հանգիստ պիտի գտնուի»:* Վերոյիջեալը չի նշանակեր, "Իմ տեղս դուք լուծս փաշտեցէք, այլ Ան արդէ՛ն լծուած է ու կը փաշտէ՛ մեր բոլորին լուծը: Մեր ընելիքը առնել է Իր լուծը, որպէսզի մենք առանձինս փաշտած չ'ըլլանք մեր լուծը, այլ լծակի՛ց ըլլանք Իրեն և օգտուինք Իր գօրութենէն:

Ներել ո՛չ միայն գաղափար մը ըլլալու է, այլ իրականութիւն: Յիսուս ճաշակած էր տառապանքը խաչին վրայ, բայց չէր դառնացած, ֆանի որ ներել գիտէր: Ներել սորված էր, ֆանի որ սիրել գիտէր: «Այսօր է, շարժելու և ստեղծագործելու ժամանակը, ներկան է մեր կեանքը բարեկարգելու առիթը, հիմա է մեր ընկերը, դրացին, մարդը սիրելու և մեր հակառակորդները ներելու պահը և ոչ թէ վաղը»--**Վ. Քհնյ. Տիւկէրեան:**

Անպատու թգնսին մեզ կ'անդրադարձնէ "խօսքի"ն գօրութեան: Մարդկութեան տրուած խօսելու տաղանդը իր մէջ կը պարունակէ գօրութիւն և կիրարկումի ուժ: Նոյնպէս մեր սրտանց ներումը մեր պարտապաններու գրաւականն է նաեւ մեր մեղքերու թողութեան--Մարկ. ԺԱ. 12-26: Յիսուս Քրիստոսի Մարդեղութիւնը գործնականօրէն կը բացայայտէ Աստուծոյ անսահման սիրոյ և թողութեան անչափութիւնը: Քրիստոսի Մարդեղութեամբ (Անոր մարմնաւո՛ր շրջանին՝ կրած մարդկայի՛ն նեղութեան փորձութեամբ), Յիսուս մարդկութիւնը (մարդկային դիւրաբեկութիւնը) ներկայացուց Հա՛յր Աստուծոյ: Որովհետեւ.--

1. *«Աստուած էր որ Քրիստոսով աշխարհը հաշտեցուց Իրեն հետ և հաշուի չառաւ անոնց (մարդոց) մեղքը»:*
2. Յիսուսի զոհաբերումը ոչ թէ միայն խաչելութիւնն էր Գողգոթայի վրայ, այլ Անոր ամբողջական *ապրումը* երկրի վրայ դարձաւ սիրոյ և ներումի զոհագործումը--Բ. Կորնթ. Ե. 18-19:

Յունիս 7, 2003
Թորոնթօ

ՀԱՆԴՈՒՐԺՈՂՈՒԹԻՒՆ ՄԵՂՔԻ ԵՒ ՊՂԾՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԵՊ

Յիսուս կը հանդուրժէ և կը բուժէ մարդկային գրեթէ բոլոր տկարութիւնները, բայց չի կրնար ներել և չի հանդուրժեր կեղծաւորութեան: Ան կը խորշի կեղծաւորութենէն ու նենգամտութենէն: Անոր ամբողջ ֆարոգութիւնը պայքար մըն էր կեղծաւորներուն և կեղծաւորութեան դէմ: Իսկականն ու ճշմարիտը կը պծգան ֆուռ հաշիւներէ, կեղծիքէ ու կեղծաւորութենէ: Յիսուս պատուիրեց Իր աշակերտներուն և ըսաւ. «Զգուշացէ՛ք Փարիսեցիներու և հերովդէսականներու **խմորէն, որ կեղծաւորութիւն է** »--Մարկ. Ը. 15 Դուկ. ԺԲ. 2:

Գրիգոր Զօհրապ ալ արտայայտուած է կեղծիքի դէմ ըսելով. «Ըսողներ կան որ բարոյականի կեղծիքն ալ բարոյական մըն է. ես այս բանաձեւը **գաղ-ջելի** կը համարեմ»: Կեղծաւորներուն համար բարոյական նկատումներ գոյութիւն չունին, որովհետեւ անոնք կեղծաւորութիւնը ուղղակի արուեստի վերածած են: Այսօր, մարդիկ կը պաշտեն ո՛չ թէ իրենց Աստուածը՝ այլ արծաթը: Իրենց ջրթներուն վրայ ունին Աստուծոյ անունը՝ այնպէս՝ ինչպէս լուսնայափոխը իր մասներուն միջեւ՝ թղթադրամը: Կը կողոպտեն, կը կեղեքեն յաճախորդը: Եկեղեցի չեն յաճախեր, բայց կը պաշտպանե՞ն Եկեղեցին: Կը փառաբանեն զԱստուած, բայց չեն հաւատար Աստուծոյ:

Կեղծաւորը դերասանի պէս կը ձեւացնէ, թէ է՝ ինչ որ չէ: Կեղծաւոր անունը կը տրուի ընդհանրապէս անոնց, որոնք կ'առնեն առաքինութեան կամ բարեպաշտութեան կերպարանքը, առանց ունենալու զայն իրենց անձնաւորութեան և կեանքին մէջ:

Յիսուս կը հանդուրժէ և կը բուժէ մարդկային գրեթէ բոլոր տկարութիւնները, բայց չի կրնար ներել կեղծաւորութեան: Կեղծաւորները կը կոչէ կոյրեր, օձեր, իժի ծնունդներ և մոլորեցնողներ:

1. Ծնութեան մէջ բնուած կնոջ Յիսուս ըսաւ. «*Ես ալ չեմ դատապարտեր քեզ. գնա՛, այսուհետեւ մի՛ մեղանչեալ*»--Յով. Ը. 11:
2. Հինգ հատ զանազան ամուսիններու առանց ամուսնութեան կենակցող կնոջ մը հետ, Յիսուս նստաւ ու խօսեցաւ և բացատրեց Աետարանը, և յաւելեալ ըլլալով յայտնեց Իր Աստուած Որդիութիւնը, ըսելով. «*Ես եմ ան, որ կը խօսիմ քեզի հետ*», ու հաւատքի բերաւ զայն--Յով. Դ. 28:
3. Յիսուս երբ տեսաւ չորս հոգիներով բերուած անդամալոյծը, և բերողներուն հաւատքը, ըսաւ անդամալոյծին. «*Որդեա՛կ, բու մեղքերդ ներուած են քեզի*»--Մարկ. Բ. 5:

4. Երեսուներեք տարիներէ ի վեր ինկած պառկած հիւանդի մը, Յիսուս հարցուց «Կ'ուզե՞ս առողջանալ», և բժշկեց զայն--Յով. Ե. 5-6:

Ինչո՞ւ մեղքի և պղծութեան համբերող և դիմացող Աստուած, չհանդուրժեր կեղծաւորութեան:

Կեղծաւորութենէ զատ ուրիշ որեւէ մեղանչում, մարդուս բարոյական խղճմտանքին ցաւ կը պատճառէ, իսկ կեղծաւորի մը ուրիշը խաբելը, կամ մոլորեցնելը, ինքզինքը կը հերոսացնէ: Ինչ որ հակառակ է ճշմարտութեան՝ իրականութեան և նպատակ ունի մոլորեցնելու և խաբելու, կեղծիք և սուտ է: Ներկայ յառաջադէմ և ինքնագլուխ դարու մէջ, կ'եղծիքին կու տան այնպիսի փայլ, որ ամենէն շլացուցիչ սուտերը կը մնան մութի մէջ: «Զարացած համոզումները աւելի վտանգաւոր են ճշմարտութեան համար, քան սուտերը»: Արեւմտեան մամուլի էջերը լեցուն են չափազանցուած լուրերով, սուտերով, միտք պղտորող և "ուղեղ լուացող" արտայայտութիւններով: Ազատ Բեմը չարաչար գործածելը լրագրական անպատասխանատու, անհեթեթութիւններով և մանաւանդ անհիմն սուտերով, կեղծաւորութիւն է:

***«Եթէ սուտը հագնի բեհեզ լուսածաղիկ,
դէմքին վրայ եթէ ցոլայ արծաթ ցօղիկ,
Մեղրածորան բարբառ բերնէն եթէ կաթէ,
Ճակտին վրայ կրրէ արսակ աղամանդէ,
Իր շուրջն անդուլ թափօր կազմէ աշխարհի համայն
Սուտին փառքն է պատիր, ու նա՛յն»:***

--Զ. Ա.:

Կարելի չէ սուտի և կեղծիքի վերածել ճշմարտութիւնը: «Կարելի չէ կեցուածք ճշդել, դիրք որոշել սուտի ու կեղծիքի վրայ»-- **Գ. Նգրուրեան:** Երբ մարդ կորսնցնէ Բացարձակին (Աստուծոյ) ըմբռնումը, մարդ կը կորսնցնէ ճշմարիտին ու կեղծին, սուտին և ուղիղին իրականութիւնը:

Միայն անոնք կրնան «Տիրոջ լեռը և Անոր սուրբ տեղը ելլել, որոնք ձեռներով սուրբ և սրտով մա՛հար են, որոնք ստույթեան անձ նասուր չեն ուլար ու նեւգութեամբ երդում չեն րնէր»--Սաղմ. ԻԴ. 3:

Աստուած Աեր է, համբերող է և հանդուրժող, ո՛չ որովհետեւ չի կրնար սուտն ու կեղծիքը դադրեցնել, այլ կ'ուզէ որ մարդիկ ապաշխարեն և դարձի գան: Աստուած տարիներ ու տարիներ համբերեց չենք գիտեր քանի՞ դարեր մինչեւ որ Զրհեղեղը եկաւ և անօրէններն ու ստութիւնը սիրողներ կորսուեցան: Կարդանք Աստուծոյ վիշտը երբ Ան տեսաւ մարդոց խորհուրդներու ***ջարու նակակա՛ն*** ապականացումը.

«Տէրը երբ տեսաւ որ մարդոց չարութիւնը երկրի վրայ կը ջատանայ, և անոնց սրտին խորհուրդներու ն բոլոր գաղափարները միայն չար էին

ամէն որ, Տէրը երկրի վրայ մարդը ստեղծելու և զոջաց ու էր սրտին մէջ տրամեցաւ: Եւ Տէրը քսաւ, երկրի վրայէն ջնջեմ մարդը զոր ստեղծեցի, մարդէն մինչեւ անասունները և սողունները ու երկինքի թռչունները, վասն զի զանեմ ստեղծելուս կը զոջամ: Բայց Եոյ Տէրոջը առջեւ ջնորհմ գառւ»-Մնն. 2. 5-8:

Զրհեղելէն ազատեցան միայն ութը մարդկային արարածներ, սակայն անասուններէն ու թռչուններէն հարիւրաւորներ և հազարաւորներ: Ինչո՞ւ, որովհետեւ միայն մարդ արարածն է, որ կը կեղծէ և կը ստէ: Յիսուս Քրիստոսի աներկրորդելի առաքելութիւնը պայքա՛րն էր սուտի և կեղծիքի դէմ: Կեանքի ու պայքարի հերոսական ուղին Յիսուս Քրիստոսի ճանապարհն է՝ ճշմարտութեան և սիրոյ: Ան քսաւ. «Ես եմ ճշմարտութիւնը և Կեանքը»:

Աշխարհի մէջ կան երկու իրողութիւններ, որոնք չեն կրնար միասին գոյութիւն ունենալ՝ Լոյսը և խաւարը: Խաւարը իր գոյութիւնը կը պարտի Լոյսին բացակայութեան ու կ'անհետանայ Լոյսին և ճշմարտութեան երեւումովը:

Ուստի ըլլանք Բաջամարտիկ և Ճշմարիտ վկաները Յիսուսի և փայլատակենք Անոր Լոյսն ու ճշմարտութիւնը, որպէսզի հեռանայ ու չճանայ կեղծիքն ու խաւարակուռ սուտը:

Օգոստոս 11, 2003
Թորոնթօ

Ի ԱՂԱՂՈՒԹԻ՞ՒՆ, ԹԷ ՄՏԱՏԱՆՋՈՒԹԻՒՆ

Մարդիկ որքա՞ն կը ջանան դիւրացնել, աշխատանքը և հաճելի դարձնել մարդկային կենցաղավարութիւնը, կարծես անծանօթ պարագաներ և դէպքեր ծնունդ կ'առնեն ու կը խուզեն և կը մտահոգեն մարդկային կեանքը:

Օրինակ.

Համալսարանական ջրջանաւարտ մը, հազիւ կը գտնէ նախանձելի պաշտօն մը, երբ Բանի մը տարի յետոյ այդ հսկայ ընկերութիւնը կը սնանկանայ և ինք կը մնայ գործազուրկ: Նիւթական լաւ դիրք ունեցող երիտասարդ մը կը հանդիպի իր երագած օրիորդին: Այս գոյգը կը կնքեն իրենց սուրբ ամուսնութեան խուրհուրդը հաւատարմութեամբ: Երբ լոյս աշխարհ կը բերեն իրենց անդրանիկ մանչ զաւակը, իրենց ուրախութիւնը չափ ու սահման չունենար: Մոյն ամուրը իրենց ուրախութեան արբեցութենէն չհանդարտած, կ'ստանան Պատերազմական Նախարարութենէն հրաման մը, որ այս երիտասարդը պարտի երթալ պատերազմական ճակատ, կատարելու համար իր ազգային պարտականութիւնը: Կրնա՞ք երեւակայել այս ամուրին հոգեկան մտատանջութիւնը: Կարծես ակնթարթի մը մէջ երկինք կը փլչի իրենց գլխուն վրայ:

Ո՞վ կրնայ խաղաղեցնել այս գոյգին հոգին, կամ ո՞վ կրնայ յուսադրել այս ամուրը: Որո՞ւն կրնան ապաւինիլ ու ֆաջալերուիլ: Այսպիսի պարագաներու մէջ է, որ կ'երեւի մեր Տէրը Յիսուս և կ'ըսէ աջակերտներուն.

«Խաղաղութի՛ւն և ձեզիս»:

Արտի՛ և մտքի խաղաղութիւնն ու հոգւոյ անդորրութիւնը կու գան մի միայն Մարդեղինացած Յիսուս Զրիստոսէ, որովհետեւ միայն Ա՛ն յաղթած է մահուան ու գերեզմանին և մարդկային մտահոգութեան և մտատանջումին: Համա՛յն աշխարհի մարդոց, նախապատմական ջրջաններէն մինչեւ այսօր: Մարդկային մեծագոյն վախը եղած է մահն ու անծանօթ անդենականը Մահուան ու գերեզմանին Յաղթողը եղած է միա՛յն մեր Տէրը և Փրկիչը Յիսուս Զրիստոս:

Զրիստոսի դիտանկիւնէն, մարդկութեան իսկական թշնամին, վախն է, հոգն ու մտատանջութիւնը և անվստահութիւնը կեանքին: «Չար մտածումը երբ կատարում չի գտներ, չարիք չէ. բարի մտածումն ալ երբ չ'իրագործուի, բարիք չէ»-- **Հայր Արսէն**: Եթէ մենք մտահոգ ու շահագրգռուած ենք հարցով մը, Աստուած եւս գիտակից է մեր հետաքրքրութեան, ու պիտի օգնէ մեզի: Երկնայինները մտահոգող հարցերն են--աշխարհի ապականութիւնները, նենգութիւնները ու Աստուծոյ տունը ա՛յլ նպատակներու համար

օգտագործող արարքները:

Խաղաղութան դաջինք կը ստորագրեն, բայց գաղտնօրէն արջաւանքի ծրագիրներ կ'որոճան: Խաղաղութան և Բաղաճակրթութեան լայն և հարթ պողոտաներով ընթացող եկեղեցիներ, որոնք կ'ուզեն մարդիկ հաճեցնել քան ծառայել Աստուծոյ: Կեանքի պայքարին մէջ երբ ունենանք հաւատք առ Աստուած խաղաղութան մէջ կ'ապրինք յաւիտեան: Աղօթքը խնդութեան, խաղաղութեան և գոհութեան բխումն է դէպի լաւագոյնը: Աղօթքը՝ տրամութեան տարակուսանքներու և վիշտերու հրաժարադէպ սփոփանք է: Աղօթքը՝ հեզութեան, անբարկութեան, անյիշաչարութեան և սիրոյ բխումն է:

Խաղաղութիւն և Արդարութիւն անբաժանելի ընկերներ են:

- «Լուութեան պտուղը աղօթքն է:
- Աղօթքի պտուղը հաւատքն է:
- Հաւատքի պտուղը սէր է:
- Սիրոյ պտուղը ծառայութիւն է:
- Ծառայութեան պտուղը խաղաղութիւնն է:

--Մայր Թերեզա

Գոհունակութեան զգացումը Աստուծոյ համար ո՛չ միայն հաւատացեալին մարդկայնօրէն արտայայտուիլն է, այլ իմանալ Իր արարածին մտահոգութիւնը, զգալ անոր սրտին խռովքը և աղօթքի ընթացքին խնդրել որ Աստուծոյ թագաւորութիւնը գայ, և Անոր կամքը ըլլայ: Յիսուս ըսաւ. «Ուստի կ'ըսեմ ձեզի. ձեր կեանքին համար հոգ մի ընէք թէ ի՛նչ պիտի ուտէք կամ ի՛նչ պիտի խմէք, և ոչ ալ՝ ձեր մարմնին համար, թէ ի՛նչ պիտի հագնիք» --Մատթ. 2. 25: Մտատանջի և մտահոգութեան մի՛ ենթարկուիք որովհետեւ ամենակարեւորը կեանքը կարենալ ապրի՛լն է:

«Ար՛ մտահոգուի՛ք ո՛չ ձեր ուտելիքով և ո՛չ ալ ձեր խմելիքով, և մի՛ մտատանջէ՛ք դուք ձեզ, որովհետեւ աստե՛ք քոյրորդ հեթանոսներու ն յատուկ են: Ձեր Հայրը գիտէ որ այդ քոյրոյին պէտք ու նիք: Այլ, խնդրեցէ՛ք որ Աստուծոյ արքայութիւնը գայ, և Աստուած այդ քոյրորդ աւելիով պիտի տայ ձեզիս»--Ղուկ. ԺԲ. 29:

Սկզբնական ժամանակներէ ի վեր, մտահոգութիւնը անբաժան ընկերը եղած է մարդ արարածին: Բայց մանաւանդ արդի Բաղաճակրթութեամբ ստեղծուած ընկերային, տնտեսական և այլ պայմաններուն մէջ, մտահոգութիւնը և անոր գործած աւերները, հոգեբանական իմաստով, յստակ նշանակութիւն կը ստանան: Ջախողելու պարագային, չի մեղադրենք մեր աստղը: Յաջող մէկը եղած չըլլալու գաղափարը, երկիւղը, մտահոգութիւնը մանաւանդ դէմքի

արտայայտութիւնը մեր կեանքը անտանելի կը դարձնեն:

Ուրեմն հարկ է որ վերաֆննութեան ենթարկենք մենք զմե՛զ: Ոչ միայն հաւատալու ենք Աստուծոյ, այլ վստահելու ենք Անոր սիրոյն և հոգատարութեան: Երբ դիտենք արջալոյսող արեգակը, ան ելեկտրական լամպի նման ակնթարթի մը մէջ չի լուսաւորեր աշխարհը, այլ համրաբար և դանդաղօրէն, հորիզոնին վրայ կայնած, կարծես յաղթական հերոսի մը նման կը բարձրանայ ու կը լուսաւորէ երկիրը: Նոյն հանգամանքով եւս, մեր Տէրը Յիսուս կ'ըսէ մեզի

***Աշխարհի մէջ նեղութիւն պիտի ունենամ, սակայն
բաջալերուեցէ՛ք, որովհետեւ ես յաղթեցի աշխարհին:***

--Յով. ԺԶ. 33:

Թովմաս աշակերտ, որ իր ձկնորս բարեկամներէն աւելի ուսեալ էր, չկրցաւ հաւատալ Յիսուս Վարդապետին յաղթական Յարութեան և կ'ուզէր ստոյգը գիտնալ: Յիսուս կը սիրէ նոյնիսկ այսպիսի մեծամիտները, որովհետեւ այսպիսիներու ալ պետք ունէր, ուրիշները դաստիարակելու համար:

Յաղթական Յիսուս կրկին անգամ երեւցաւ աշակերտներուն երբ Թովմաս ալ ներկայ էր անոնց մէջ: Յիսուս խաղաղութեան բարեւը տալէն յետոյ, դարձաւ Թովմաս աշակերտին և ըսաւ. «Բե՛ր բու մատներդ և դի՛ր այստեղ ու տե՛ս Իմ ձեռքերս. եւ բե՛ր բու ձեռքդ ու մխրճէ՛ Իմ կողիս մէջ. Անհաւատ մի՛ ըլլար, այլ՝ հաւատացեալ»: Թովմաս, ապշահար և պարտուած, ծնկաչոք և արցունքահոս աղաղակեց ըսելով. ***«Տէ՛ր իմ և Աստուած իմ»:*** Յիսուս առանց յանդիմանելու Թովմասը, ըսաւ անոր. *«Բու ն զիս տեսար և հաւատացիր. երանի՛ անոնց որ չեն տեսած ու կը հաւատան»:*

Բոլոր անոնք, որոնք մտահոգուած կը մտատանջուին կեանքի ալեկոծ դժուարութիւններու մէջ, Յիսուս անո՛նց ալ կ'երեւի, պայմանաւ որ իրենց հպարտ կեցուցքէն հրաժարին ու միանան այն համեստ հաւատացեալներուն, որոնց հաւատքին ու միասնականութեան հաւաքի՛ն մէջ կ'իջնէ Յիսուս և պիտի ըսէ՛ բոլոր Թովմասներուն. ***«Եկո՛ւք և տե՛ս»:***

Մայիս 18, 2003

Թորոնթօ

ԽՈՐԱՆ, ՀՈԳԻՈՅ ԵՒ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ

"Խորան"- բառը իր իմաստին մեջ կը նշանակէ "վրան", որ է սենեակի մը նմանութեամբ շարժական ու լաթեղէն նիւթէ շինուած ծածկոց, որ կը հովանաւորէ կամ *ջօջափելի* կ'ընէ Աստուծոյ ներկայութիւնը: Հեթանոս տաճարներու Խորանները եւս ուղղուած կ'ըլլային միջտ դէպի Արեւելք, դէպի «Լոյսն Արեգական»: Խորանը բեկոր մըն է երկինքէն և մումերը՝ աստղեր: Հին Կտակարանի վկայութեան խորանը աղօտ օրինակն է որ Սինայի բարձունքին ցոյց տրուեցաւ Մովսէսի, ըստ Ելից. ԻԶ.30 համարին

Մեծ Եղեռնին երբ հայեր ափսորուեցան անապատ, հոն եկեղեցի չի կար, սակայն իրե՛նք դարձան կենդանի եկեղեցի, խորան և վկայութիւն: Կոմիտաս վարդապետ՝ իր հոգիի՛ խորանին կը սգայ իր ժողովուրդին խաչելութիւնը: Յիսուսի Մարդեղացումէն յետոյ, մարդկային *սիրտը դարձաւ խորան* Աստուծոյ: Հոգեկան կեանքի միջնաբերդը, ներքին խորանը, մարդուն սի՛րտն է որուն դէմ դաւ ու դաւաճանութիւն չի ներուիր բնաւ: Սոյն պատճառաւ, Յիսուս ըսաւ.

***«Երանի՛ անոնց, որ մաքուր են սրտով,
որովհետեւ անոնք զԱստուած պիտի տեսնեն»:***

Յիսուս Զրիստոսի սրբարար Մարդեղութեամբ, այն բոլոր արարողութիւնները և տեսանելի խորանը, գաւիթը, և վարագոյրով մը ծածկուած Սուրբ Արքոցը դարձան հոգեկան, անջօջափելի և աչքով անտեսանելի իրողութիւններ: Կենդանիներու և արջարներու զոհագործութիւնները դարձան հաւատացեալներու հոգեկան ծառայութիւնը և նուիրումը:

Եսայի մարգարէն կը պատգամէ ըսելով.

«Տէրը այսպէս կ'ըսէ.

Երկինք իմ այժոռս է,

և քրկիք իմ ոտներուս պատուանդանն է.

Այս ի՞նչ տու ն (խորան) է իմ հաւգասութեանս համար,

Զանգի ասոնց ամէնը իմ ձեռքս ջինեց.

Բայց ես ասոյ պիտի նայիմ,

Այսինքն խոնարհին և կրտրած հոգի ու նեցուղին.

և իմ խօսմէն դողացողին.

Արջառ մոյթողը մարդ մեղցնողի պէս է,

Գառնուկ զոհողը քու ն մոյթողի պէս,

և ու էր մատուցանողը խոզի արխ ն մատուցանողի պէս.

--Եսայի ԿԶ.1-3:

«Կաղաչեմ որ դուք ձեզ Աստուծոյ ընծայեք որպէս կենդանի զոհ մը՝

Իրեն վերապահուած, որովհետեւ ասիկա՝ է Աստուծոյ ուզած հոգեւոր պաշտամունքը: Այս աշխարհի կերպարանով մի կերպարանաւորուիք, այլ նորոգուեցէ՛ք ձեր մտքին նորոգութեամբ, որպէսզի բննէ՛ք բարին և թէ ի՛նչ է Աստուծոյ կամքը՝ բարին, հաճելին և կատարեալը»--Հրով.ԺԲ. 1-2:

Ամէն անգամ որ Յիսուս աղօթած է, Ան բարձրացած է լեռ և ամայի խաղաղութեան մէջ յարաբերած ու հոգեպէս հաղորդուած է Իր Հօր հետ: Ան՛կ անգամ իսկ յիշատակութիւնը չի կայ որ Յիսուս տաճար գացած է աղօթելու համար: Նոյնիսկ Ան Պայծառակերպութեան պահուն լեռ բարձրացաւ որ աղօթէ իր երեք աշակերտներուն հետ: Յիսուս Իր աշակերտներուն ո՛չ միայն աղօթել սորվեցուց բառերու արտասանութեան միջոցով, այլ նաեւ ցոյց տուաւ անոնց թէ աղօթքը հոգեւոր յափշտակութիւն է և իսկական յարաբերութիւն մը Հօր Աստուծոյ հետ: Մարդեղացեալ Յիսուս ցոյց տուաւ աշակերտներուն, թէ տաճարն ու խորանը (եկեղեցին), Իր աշխարհ գալով, փոխակերպուած են մարդկային սրտին և հոգւոյն: Այսինքն.--

Աղօթող անձը կարիքը չունի բարաշէն եկեղեցւոյ կամ լուսազարդուած խորանի, այլ հաւատացեալ մը պահանջքը ունի սրբացած սրտի և մաքրամաքուր հոգեկան մտածումներու: Երբ մարդ արարած մաքրած է իր սիրտը նախանձէ և մտածելակերպը ուղղած ու նուիրած է սիրոյ ու ծարայութեան, ենթական ի՛նք դարձած է եկեղեցի ու խորան, ուր Աստուած կ'իջնէ յայտնելու անոր Իր սերն ու ողորմութիւնը: Այսպիսի կերպարանափոխուած անձեր կը կարօտին ու կը փնտռեն միայն ամայութիւն և խաղաղութիւն յարաբերելու և հաղորդուելու Հայր Երկնաւորին հետ, ինչո՞ւ, որովհետեւ Հայր Աստուած եւս կը փնտռէ այսպիսի անձեր, որպէսզի յայտնէ անոնց Իր ծրագիրները և բաժնեկից ընէ զիրենք Իր մտածումներուն:

Այն անձը որ ճանչցած է սուրբ Աւետարանին Յիսուս Զրիստոսը, բնաւ չի կասկածիր, նոյնիսկ բոլոր մը, որ ինք գոյութիւն ունեցող աստուածակերպար անձ մըն է, և աշխարհի վրայ լքուած ու մոռցուած որք մը չէ: Մարդեղացեալ Յիսուս Ի՛նք վստահեցուց մարդկութիւնը ըսելով.

«Մարդու Որդին եկաւ փնտռելու և փրկելու կորսուածը»:

--Ղուկաս ԺԹ. 10

Ոչ թէ մե՛նք զմեզ որք ու կորսուած կարծենք, այլ հաւատա՛նք թէ Հայր Աստուած աշխարհ դրկեց Իր Միածին Որդին Յիսուս, որ փնտռէ մեզ գտնէ՛ և յաւիտենական կեանք շնորհէ: Մարդկութիւնը ո՛չ թէ որբացած է, այլ Հա՛յր ունի, որ զինք կը փնտռէ և կ'ուզէ ինամել զինք:

Յիսուս Զրիստոս մեզ գտնելէն յետոյ, ոչ թէ պարտադրաբար կ'ուզէ որդեգրել մեզ, այլ կը թախանձէ որ Իրեն հետեւինք: Ան մեր սրտին դրան առջեւ կայնած շարունակ կը բախէ մեր հոգւոյն դուռը ու կ'ըսէ. *«Եթէ մէկը ականջ դնէ Իմ Հայնիս ու բանայ դուռը՝ պիտի մտնեմ անոր բով և պիտի ընթրեմ անոր հետ, ան ալ՝ ինձի հետ».*

Աստուած, մեր սրտի խորաններէն, ոչ թէ գառներու զոհ կը պահանջէ, այլ Յիսուս զոհուած է մեզ փնտռելէն, ու յոգնած և սպառած, կայնած է մեր դռան առջեւ որ ներս մտնէ, ո՛չ թէ մեզ Իրե՛ն ծառայեցնելու, այլ մեզի աւետելու և երաշխաւորելու, թէ մենք որքեր չենք, այլ իր երկնաւոր Հօր անգին զաւակները: Մերտե՛նք Աւետարանները, ոչ միայն ճանչնալու համար զԱստուած, այլ նաեւ գիտնալու մեր հանգամանքը, թէ որքա՛ն սիրելի ենք Աստուծոյ, որ մեզի շնորհած է Իր կերպարն ու նմանութիւնը: Աստուած Որդի Յիսուս, ճանչցնելու համար մարդկութեան իրենց որպիսութիւնը և հանգամանքը, ըսաւ. ջրհորի մը առջեւ կայնած Սամարուհիին.

«Պիտի գայ ժամանակ, և արդէն եկած է, երբ ճշմարիտ երկրպագողները երկրպագութիւն պիտի ընեն Հօրը՝ հոգիով և ճշմարտութեամբ, քանի որ Հայրն ալ այդպիսի երկրպագողներ կ'ուզէ իրեն: Հոգի է Աստուած, և անոր երկրպագողները պէտք է հոգիով և ճշմարտութեամբ երկրպագութիւն ընեն»--Յով. Դ. 25-26:

Յիսուս, նախ քան վերոյիշեալ իրաւ խօսքերը ըսելէ առաջ, հաղորդած էր Սամարացի կնոջ, նիւթական եկեղեցոյ և անոր խորանին մասին հետեւեալ ճշմարտութիւնները. *«Մ'զ կին, հաւատա՛ ինձի, որ պիտի գայ ժամանակ, երբ ո՛չ այս լերան վրայ և ո՛չ ալ երուսաղէմի մէջ երկրպագութիւն պիտի ընեն Հօրը»--Յով. Դ. 23:*

Ի՛նչ պատճառաբանութեամբ Յիսուս կը փոխակերպէ երկրպագութեան տեսանելի ու ջօջափելի խորանը հոգեշահ և հոգեղէն խորաններու՝ մարդկային մահուր սրտերու: Որովհետեւ ժամանակի ընթացքին ի՛նչ որ նիւթական է, կրնայ ապականիլ և մարմարաշէն խորանն ու եկեղեցի՛ն դառնալ կուռք և երկրպագութեան առարկայ փոխանակ Աստուծոյ: Քրիստոսի աշակերտներն իսկ, ազգային հպարտանքով ցոյց տուին Երուսաղէմի հրէական տաճարին քարեղէ՛ն կառոյցը, որպէս խորան և Աստուծոյ ներկայութեան ապացոյց: Գիտե՞ք Յիսուս ինչ պատասխանեց իր աշակերտներուն, «Երբ ոմանք տաճարի մասին կ'ըսէին թէ՛՝ գեղեցիկ քարերով ու աշտարակներով է զարդարուած, Յիսուս ըսաւ. *«Այդ քոյրդ զոր կը տեսնե՛ք, որքն պիտի գան, երբ այնտեղ քար քարի վրայ պիտի չմնայ որ չհանդուի»--Ղուկ. ԻԱ.5-6:*

Երուսաղէմի մարմարաշէն ու քարաշէն տաճարին դրամապաշտ քահանաները թէպէտ խաչեցին և սպաննեցին իրենց զրկուած Փրկիչն ու Աստուած Որդին, և Աստուած Յարութիւն տուաւ Անոր: Քրիստոսի Յարութենէն քարատուն տարիներ յետոյ հռոմէական բանակը եկաւ Երուսաղէմ և հիմնաշատակ կործանեց և այրեց զայն:

Երկու հազար տարի անցած է ու ցարդ քարուքանդ կը մնայ:

Յուլիս 29, 2003
Թորոնթօ

ՏԱՍԸ ԿՈՅՍԵՐՈՒ ԵՒ ՏԱՂԱՆԳՆԵՐՈՒ ԱՌԱԿԸ

--Մատթ. ԻԵ.1-13, 14-30

Ի՞նչ կը նշանակէ ըլլալ կոյս: Կոյս ըլլալ կը նշանակէ անարատ ողջախոհ, պարկեշտ, զգաստ և մաքուր: Մ արմատուր կուսութիւնը բաւարար է՛, եթէ մտնով ալ չիրագործուի: Կուսակրօնութիւնը սեռային յարաբերութենէն ո՛չ հրաժարիլ է և ոչ ալ սեռային յարաբերութիւնը կը դատապարտէ, այլ բնական և մարմնական մղումները զսպելու ու հոգեղէն զօրութիւն ստանալու հոգեգիտական վարժութիւն և կարգապահութիւն է: Պարտադրուած կուսակրօնութիւնը *պատմակա՛ն* և *եկեղեցակա՛ն* վարդապետութիւն է: Ո՛չ *հաւատֆի* և ո՛չ ալ *Յիսուսի և ետաբանի* պատուիրաններէն մէկն է: Պարտադրուած կուսակրօնութիւնը, ո՛չ արժանիֆ, ո՛չ բարեմասնութիւն և ոչ ալ աստուածահաճոյ արարֆ մըն է:

Միայն կոյս ըլլալը, իմաստուն և ինչացի ըլլալ չի նշանակեր: Մեր Տէրը տասը կոյսերուն հինգը յիմար կը կոչէ: Յիսուս Իր տասներկու աշակերտները կուսակրօն վանականութեան չհրաւիրեց: Աշակերտները, իրենց Տիրոջ երկինֆ համբառնալէն յետոյ անապատ չֆաջուեցան գիշեր ցերեկ աղօթելու համար: Յիսուսի պատուերը հետեւեալն էր. «Ձեզ կը դրկեմ. Գացէ՛ք ուրեմն, **աշակերտ դարձուցէ՛ք** բոլոր ազգերը: ... **Սորվեցուցէ՛ք** անոնց *պահել այն աւէնը*, ինչ որ **պատուիրեցի** ձեզի»--Մատթ. ԻԸ. 19-20:

Աստուածայարգ և հաճոյակատար կուսութիւնը, անձնուրացութեամբ ուրիշներու ծառայութեան նուիրուած ըլլալն է:

Ինչպէ՞ս:

Աստուած երկիրը ստեղծելէն յետոյ երբ մարդ արարածը չէր ստեղծըւած, կը կարդանֆ «Ա գետինը գործելու մարդ չկար»--Մնն. Բ.5: Աստուած, մարդ արարածը ստեղծելէն յետոյ, որպէսզի ան եւս ստեղծագործ դառնայ, առաւ Իր գագաթնագործ մարդ արարածը,

***«Ա եղեմի պարտէզին մէջ դրաւ,
որպէսզի զանիկա գործէ ու պահէ»:***

Մարդ արարած միայն աշխատելով, ծառայելով և ուրիշներուն օգնելով կը դառնայ ստեղծագործ և աստուածանման: Մարդ՝ իր գոյութիւնը կա՛րծէլորէ երբ պարի՛ ուրիշի մը համար: Մարդ արարած միայն ուրիշի մը ծառայելով և զԱստուած պաշտելով կ'արդարացնէ իր կոչումը: Յիսուս Իր Մարդեղացումը արժեւորեց ո՛չ թէ ճգնելով որպէս անապատական մը, այլ՝ աշխարհի մէջ գործելով: Ան բժշկեց հիւանդները, դեւերը հանեց, բորոտներ մաքրեց, կոյրերուն աչքերը բացաւ, մեռելներուն յարութիւն տուաւ և աղֆատներուն ֆարոգեց Աստուծոյ Թագաւորութիւնը: Ան սորվեցուց Իր աշակերտներուն ըսելով. «Որդին Մարդոյ եկաւ, ոչ թէ ծառայութիւն ընդունելու, այլ ծառա-

յելու: Յիսուսի վերջին արարքը եղաւ, աշակերտներուն փոշոտ ոտքերը լուալ:

Յիսուս Իր երկնային կեանքը նուիրեց որպէսզի գայ աշխարհ, փնտռէ կորսուածը, գտնէ զայն և յաւիտենական կեանքի արժանացնէ: Մարդեղացեալ Յիսուսի կեանքին առարկայական եղելութիւնը, Մամարացի կինն է:

Աշակերտները երբ վերադարձան, և բերին ուտելիքները, խնդրեցին Յիսուսէ որ մասնակցի ճաշելու իրենց հետ: Ան պատասխանեց աշակերտներուն ըսելով. «Ես ունիմ ուտելիք կերակուր մը զոր դուք չէք գիտեր»:

Աշակերտները իրարու մէջ կ'ըսէին. «Արդեօք մէկը ուտելու բա՞ն մը բերած է Անոր»։ Յիսուս ըսաւ անոնց. «Իմ կերակուրս այն է, որ ընեմ կամքը Անոր որ զիս դրկած է, և կատարեմ Անոր գործը: Աստուծոյ գործը գործել ոչ թէ մարդը կը հոգնեցնէ, այլ՝ մարդ արարածը կը գոհացնէ և կը յագեցնէ: Հոգեկան հաճոյք, և բերկրութիւն կը շնորհէ ենթակային:

Հաւատա՛լ Յիսուսի, աշակերտի՛լ Անոր և կոչում ունենալ միայն մէկ բան կը նշանակէ հաւատարիմ ծառայողի մը համար. մարդոց մէջ գործել նուիրումով, սիրով և առանց որեւէ ակնկալութեան: Ինչո՞ւ, որովհետեւ Աստուծոյ պատրաստած երկրագունդին վրայ Սատանան կ'աշխատի գիշեր և ցերեկ որպէսզի ի՛նք դառնայ տէրը և թագաւորը, փոխանակ Աստուած Որդի Յիսուս Զրիստոս: Սատանային բոլոր գործը, **որո՛ւմ** ցանել է մարդոց սրտին մէջ, որպէսզի Աստուած Ճշմարիտին խօսքերը անհաւատալի թուին մարդ արարածներուն:

Ուստի, մենք զմեզ հաւատացեալ զգացողներս, Յիսուսի բացակայութեան այնպիսի սիրո՛ւ և նուիրումով գործելու ենք մարդոց մէջ, որ աշխարհ տեսնելով մեր սերն ու ծառայութիւնը, կարենայ հաւատալ որ Յիսուս Զրիստոս պիտի շնորհէ յաւիտենական կեանք Իրեն հաւատացողներուն: Ան կը պատուիրէ Իր աշակերտներուն ըսելով.

«Անոր պատուիրան կու տամ ձեզի, որ սիրէ՛ք զիրար. ինչպէս ես ձեզ սիրեցի, դուք ալ սիրեցէ՛ք զիրար: Եթէ՛ դուք զիրար սիրէ՛ք՝ ասով ամէնէ՛ր սիտի գիտնան թէ՛ դուք իմ աշակերտներս էք.»--Յով. ԺԳ. 34-35:

Յիսուս աշխարհ եկաւ հիմնելու, Սատանայէն առեւանգուած երկրագունդին վրայ, Արարիչ Աստուծոյ գերագոյն սիրոյն, գթութեան և ողորմութեան հաւաքականութիւն մը, և անուանեց զայն. "Իմ Եկեղեցիս":

Առեւանգուած այս երկրին վրայ, Սատանան և իր համախոհները կ'ախորժին և կը ֆաշալերեն միայն մարմնական ցանկութիւններն ու նիւթական հարստութիւնը: Սատանային կողմնակիցները և անոր գործակալները իրենց ցանկութիւններուն և հնազանդութիւն ցոյց տալու համար ջարուակ որով կը ցանեն մարդոց մտքերուն և հոգիներուն մէջ:

Որպէս հակազդեցութիւն և հակադրութիւն որով ցանողներուն, Յիսուս հիմնեց Իր Եկեղեցին այս աշխարհին մէջ, որ դժոխքին դռներն անգամ անկարող ըլլան զայն խորտակելու: Այսօր երկու հազար տարիներէ ի վեր կը շարունակէ Յիսուսի Եկեղեցին թէեւ սկար, դանդաղ և բեկանուած, սակայն կան քաջամարտիկներ անոր մէջ, որոնք կը վախցնեն նոյնիսկ Սատանան, իրենց անվեհեր անձնուրացութեամբ, հաւատարմութեամբ և սրբութեամբ:

Յիսուս Փրկիչ՝ Իր սրբարար և փրկարար գործունէութիւնը վստահեցաւ այսպիսի անձնուրաց անձերու և պատուիրեց անոնց ըսելով.

«Ինձի տրուած է ամէն իշխանութիւն երկրիմի մէջ և երկրի վրայ. ինչպէս Հայրը որչեց զիս, ես ալ ձեզ կը որչեմ: Գացէ՛ք ուրեմն, աշակերտ դարձուցէ՛ք բոլոր ազգերը, մկրտեցէ՛ք զանոնք Հօր և Որդիին և Սուրբ Հոգիին անունով: Մտրվեցուցէ՛ք անոնց պահելու այն ամէնը, ինչ որ պատուիրեցի ձեզի. և ահա ասից ես ձեզի հետ եմ բոլոր օրերը՝ մինչեւ աշխարհի վախճանը»--Մատթ. ԻԸ. 18-20:

Յիսուսի Եկեղեցին ո՛չ դատերազայր մը և ո՛չ ալ ընկերա-ազգային հաւաքավայր մըն է, այլ անոր գլխաւոր գործը դաստիարակել է հաւատացեալները որ դառնան իւրաքանչիւրը վկայ և քարոզիչ (քարի ցորեն), որպէսզի որոմները չխեղդեն ցորենը: Եկեղեցին աւելի դպրատուն մըն է քան աղօթատուն, ուր հաւատացեալներ սորվելու կ'երթան Քրիստոսը պատկերացնելու իրենց վկայութեամբը:

Օգոստոս 2, 2003
Հալիպրթոն, Օնթերիօ

ԱՂՕԹԵԼՈՎ ԿԸ ՀԱՍՆԻՆՔ ԱՍՏՈՒԱԾԱՄԵՐՁ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒ

1. Ազդեցիկ և ներգործօն Աղօթքը
2. “Իրարու Հանդէպ Գթասիրտ Եղէք”
3. “Օրհնեցէք Ձեզ Հալածողները. Օրհնեցէք
և Մի՛ Անիծէք”
4. Հանդուրժողութիւն մեղքի և Պղծութեան
Հանդէպ
5. Խաղաղութի՛իւն, Թէ Մտատանջութիւն
6. Խորան, Հոգւոյ Եւ Ճշմարտութեան
7. Տասը Կոյսերու և Տաղանդներու Առակը

Through Prayer We Reach The Divine Presence

ԱԼՊԷՌ ԵՌԱՏՈՒՆԿԵԱՆ
ԿԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱ
2004